ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Աբովյան** **12/06/2024**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/6
## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին՝ Վրեժ Մամուլյանը, Արման Մեղրյանը, Կարեն Սերոբյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Աննա Չոբանյանը, Եղիշե Ավետիսյանը

**Նիստին մասնակցում էին նաև** «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ իրավաբան Անի Գալստյանը և «Աբովյան ակադեմիա» ՀԿ ներկայացուցիչ Արտակ Գրիգորյանը:

**Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը**

**Նիստն արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը**

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 12-ի վեցերորդ նստաշրջանի արտահերթ վեցերորդ նիստի հետևյալ օրակարգը.
1) Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու

2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 204-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
3) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Նաիրյան փողոցի թիվ 3 հասցեում գտնվող մարզահամալիրը վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին.
4) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0142-0005 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
5) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0308-0018 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
6) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0140-0042 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
7) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0101-0212 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
8) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
9) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Երևանյան փողոցի թիվ 56/2 հասցեում գտնվող հողամասը Ստեփան Հովհաննիսյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
10) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 18/10 հասցեում գտնվող հողամասը Վահե Պողոսյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
11) Սահակ Բաղալյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Առաջարկվեց օրակարգի նախագծի 1-ին կետի 8-րդ ենթակետով ներկայացված նախագծի հավելվածի 9-րդ և 13-րդ տողերը, ինչպես նաև 10-րդ ենթակետը հանել օրակարգից:

Նախագիծը հաստատվեց առաջարկված տարբերակով:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

**Լսեցին**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/***

Համաձայն «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Աբովյանի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի 2016-2017 թվականների համայնքային սեփականություն համարվող արխիվացման ենթակա արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ որպես պետական սեփականություն:
2. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել արխիվացման ենթակա արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ որպես պետական սեփականություն, փոխանցելու գործընթացը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

**Լսեցին**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 204-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, 37-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2024 թվականի փետրվարի 15-ի թիվ ՎԴ/3842/05/23 վճիռը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվածքը և հաշվի առնելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 27-ի N Ք-3807), Աբովյան համայնքի ավագանին

***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը 2024 թվականի համար հաստատելու մասին»

N 204-Ա որոշմամբ հաստատված հավելված 24-ում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակութային կենտրոն» հիմնարկի» բառերը փոխարինել «Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության» բառերով:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 16-ի ««ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկը Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու և անվանափոխելու մասին» N 12-Ա որոշման 3-րդ կետը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նշվեց, որ դեռևս 2022թ. համայնքի ավագանու որոշման համաձայն «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկը վերակազմակերպել և անվանափոխվել էր Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության, սակայն ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից պետական գրանցում չէր ստացել: 2024թ. դատարանի վճռի համաձայն՝ նշված հիմնարկը գրանցվել է որպես ՀՈԱԿ և առաջացել է հաստիքացուցակի մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն:
Հարց տրվեց, թե ի՞նչն է եղել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից մերժման պատճառը:
Պատասխանվեց, որ առաջարկվել է հիմնարկը լուծարել և ստեղծել նոր ՀՈԱԿ:
Ա. Զոբանյանն առաջարկեց որոշման նախագծի 3-րդ կետում կատարել լրացում՝ «Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերից հետո լրացնել «և տարածվում է 2024 թվականի մայիսի 8-ից ծագած իրավահարաբերությունների վրա» բառերով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Որոշումն ընդունվեց առաջարկված տարբերակով:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 693-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, հիմք ընդունելով Աբովյան համայնքի և «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության միջև 2020 թվականի օգոստոսի 28-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի 2.3.3-րդ կետը, «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ Արմեն Մելիքբեկյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 23-ի N S-1025), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Նաիրյան փողոցի թիվ 3 հասցեում գտնվող մարզահամալիրը 11 (տասնմեկ) տարի ժամկետով «Աբովյան ակադեմիա» ֆուտբոլային հասարակական կազմակերպությանը վարձակալությամբ տրամադրելուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ավագանու մշտական հանձնաժողովը ձայների մեցամասնությամբ հարցին տվել է դրական եզրակացություն:

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ իրավաբան Անի Գալստյանին և «Աբովյան ակադեմիա» ՀԿ ներկայացուցիչ Արտակ Գրիգորյանին տրվեցին մի շարք հարցեր, մասնավորաբար «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ-ին մարզահամալիրի օգտագործման համար այլ դիմումատուների առկայության, «Աբովյան ակադեմիա» ՀԿ կողմից մարզահամալիրի օգտագործման ծրագրերի մասին և այլն:

Տևական քննարկումներից հետո, ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամի կողմից առաջարկվեց հարցի հետագա քննարկումը հետաձգել, տեղափոխել սույն թվականի հունիսի 26-ի հերթական նիստի քննարկմանը՝ իրենց կողմից «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ-ին պաշտոնական հարցումներ կատարելու նպատակով:
Առաջարկն ընդունվեց:

Կողմ -0 Դեմ -0 Ձեռնպահ-0 Չի քվեարկել -24
Նախագիծը կքննարկվի 26.06.2024թ հերթական նիստում:

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-013-0142-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Արման Մնացականյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 15-ի N Ք-3504), Աբովյան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արման Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի սեպտեմբերի 14-ի N 14092023-07-0055 վկայական) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0142-0005 կադաստրային ծածկագրով 0.212 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի և բանջարեղենի մշակման և պահածոյացման (չներառված ուրիշ խմբավորումներում) տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արման Մնացականյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Առաջարկվեց օրակարգի նախագծի 1-ին կետի 4-7-րդ ենթակետերում ներառված հարցերը միաժամանակ դնել քվեարկության, քանի որ նույնաբովանդակ հարցեր են:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0308-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Արմեն Ճուղուրյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 14-ի N Ք-3503), Աբովյան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արմեն Ճուղուրյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2007 թվականի սեպտեմբերի 28-ի N 2445041 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի

գյուղում գտնվող 07-054-0308-0018 կադաստրային ծածկագրով 0.1073 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (այլ հողամաս) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Ճուղուրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-043-0140-0042 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Էդգար Մխիթարյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 22-ի N Ք-3710), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Էդգար Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի օգոստոսի 11-ի N 11082021-07-0137 վկայական) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0140-0042 կադաստրային ծածկագրով 0.3677 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (հնդավոր) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջրավազան կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն

համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդգար Մխիթարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-013-0101-0212 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Ազատ Ռաֆաելյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի հունիսի 03-ի N Ք-3961), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***
1. Ազատ Ռաֆաելյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի մարտի 28-ի N 28032024-07-0081 վկայական) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0101-0212 կադաստրային ծածկագրով 1.528378 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (այլ հողատեսք) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ազատ Ռաֆաելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2024 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Առաջարկվեց նախագծի հավելվածի 9-րդ և 13-րդ տողերը հանել ցանկից և նշվեց, որ ավագանու մշտական հանձնաժողովը հավելվածի մնացած բոլոր տողերին տվել է դրական եզրակացություն:

Որոշումն ընդունվեց առաջարկված տարբերակով:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 56/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍՏԵՓԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 198-Ն և N 199-Ն որոշումների և հիմք ընդունելով Ստեփան Հովհաննիսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 17-ի N Ք-3570), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ստեփան Հովիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 24-ի N 24072023-07-0087 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Երևանյան փողոցի թիվ 1/56/1 հասցեում գտնվող 07-002-0146-0063 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 224.1 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2024 թվականի մայիսի 10-ի N 10052024-07-0100 վկայական) Աբովյան քաղաքի Երևանյան փողոցի թիվ 56/2 հասցեում գտնվող 07-002-0146-0158 կադաստրային ծածկագրով 141.0 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասը կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0146-0063 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Ստեփան Հովիկի Հովհաննիսյանին:

2. Ստեփան Հովհաննիսյանը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 963 637 (ինը հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր երեսունյոթ) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են Ստեփան Հովհաննիսյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ստեփան Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը չի տվել դրական եզրակացություն:

Որոշումը չի ընդունվել:

Կողմ -0 Դեմ -24 Ձեռնպահ -0 Չի քվեարկել -0

**Լսեցին**

***ՍԱՀԱԿ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 30-րդ, 32-36-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 198-Ն և 199-Ն որոշումների, հաշվի առնելով Սահակ Բադալյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 12-ի N Ք-947) Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Համաձայնություն տալ Սահակ Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի ապրիլի 05-ի N 05042023-07-0091 վկայական) Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի թիվ 20/3 հասցեում գտնվող 25.38 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասի փոխանակմանը Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի նոյեմբերի 07-ի N 07112023-07-0109 վկայական) Աբովյան քաղաքի Սևանի փողոցի թիվ 2/16 հասցեում գտնվող 25.38 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասի հետ:
2. Սահակ Բադալյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սահակ Բադալյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սահակ Բադալյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ա/

Ավագանու անդամներ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ՊԵՏԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՎԵԼ ՑՈՒԳՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ_____